ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/31/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված՝ գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 05.10.2018թ. ժամը 14.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը
Անդամներ՝ Վ. Ավետիսյանը
Ս. Քոչարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար հեռուստառադիոհեռարձակման սարքավորումների ձեռքերման նպատակով ս.թ. հոկտեմբերի 24-ին էլեկտրոնային **www.eauction.armeps.am** համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/31/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ /Ընթացակարգ/: Հայտերի ընդունման վերջնաժամկետ /նախաաճուրդային փուլը/ 01.11.2018թ., աճուրդը կայացել է 05.11.2018թ. ժամը 14.00-ին:

1. **Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը**

Հ/Հ	Ընկերություն	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
2	Միկրորինգ ՍՊԸ	9203500 AM D	7669583.34 AMD	20 %	9203500 AMD	7669583.34 AMD	20 %	9203500.00 AMD

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, ՀՎՀՀ-ը**

N	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ
1	Միկրորինգ ՍՊԸ	00824922

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 Հայտ է ներկայացրել Միկրորինգ ՍՊԸ ընկերությունը 2-րդ չափաբաժնով, 1 չափաբաժնով հայտերի բացման վերջնաժամկետի դրությամբ հայտեր չեն ներկայացվել:

3.2 Միկրորինգ ՍՊԸ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա է «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/31/1» ծածկագրով հրավերով (հրավեր) պահանջվող փաստաթուղթը /Դիմում-Հայտարարություն/ և համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

4. Էլեկտրոնային **www.eauction.armeps.am** համակարգով և հանձնաժողովի որոշմամբ՝

4.1 Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած 1 չափաբաժնով, և հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/31/1» ծածկագրով 2 չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Միկրոբինգ ՍՊԸ -ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.3 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ /կցված է էլեկտրոնային համակարգով/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.4 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից Միկրոբինգ ՍՊԸ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիրը՝ ապրանքային նշան, արտադրող, ծագման երկիր/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.5 Գնահատման նիստը հրավիրել էլեկտրոնային աճուրդի համակարգով սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Վ. Ավետիսյան

Ս. Քոչարյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան